ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. փետրվարի 10-ից 15-ը ք. Փարիզ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Նաիրուհի Ավետիսյան – ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ,

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Փարիզ, 2025թ. փետրվարի 10-ից 15-ը:

3. Հրավիրող կողմը.

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորում

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հանդիպման նպատակն էր ՏՀԶԿ Գլոբալ Ֆորումի Փորձագիտական գնահատման և մոնիտորինգի խմբում քննարկել մի շարք երկրների՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման և հարկային թափանցիկությանն առնչվող ՏՀԶԿ ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ փորձագիտական գնահատման արդյունքների հիման վրա կազմված հաշվետվությունները: Մասնավորապես, քննարկվել են նաև Ջիբութիի և Բրիտանական Վիրջինյան կղզիների մասով կազմված հաշվետվությունները:

5. Քննարկված թեմաները.

- Քննարկվել են հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման և թափանցիկության վերաբերյալ նշյալ երկրների հաշվետվությունները, դրանց համապատասխանությունների և անհամապատասխանությունների պատճառները, դրանց վերացման ուղղությամբ ներկայացվել են առաջարկներ: Մինչև մարտի 13-ը, տվյալ հաշվետվությունները համարվում են կոնֆիդենցիալ և չեն կարող հրապարակվել:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվում էին վերը նշված հաշվետվությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման արդյունքում ՀՀ հաշվետվությունը հաստատվեց և ըստ հարցման տեղեկությունների փոխանակման ստանդարտին ՀՀ վարկանիշը կհրապարակվի ս.թ. մարտի 12-ից անմիջապես հետո:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումը չի ենթադրում առաջարկությունների ներկայացում: Հաշվետվության արդյունքում այս փուլն ավարտվեց:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

19/02/2025թ.